

Պաշտոնական ընդդիմախոսի գրախոսական

Արմինե Ամեիյանի ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված "Մուլթ նյութը և գալակտիկական հալոները" թեմայով ատենախոսության վերաբերյալ

Մուլթ նյութի բնույթի վերծանումը ներկայումս, թե տեսական ֆիզիկայի, թե փորձարարական ֆիզիկայի՝ արագացուցիչների, թե աստղաֆիզիկական՝ դիտողական հետազոտությունների կարևոր խնդիրներից մեկն է: Տվյալ ատենախոսությունը նվիրված է մուլթ նյութի հետազոտմանը աստղաֆիզիկական տվյալների միջոցով՝ գալակտիկաների հալոներում, այդպիսով, իհարկե, համապատասխանելով նշված կարևոր խնդիրներին:

Ատենախոսությունում հետազոտվում են գալակտիկական հալոների հատկությունները տիեզերական մնացորդային ճառագայթման PLANCK արբանյակի միջոցով ստացված տվյալների օգնությամբ: Մանրամասն ներկայացված են նախ այդ տվյալների մշակման մեթոդները, տվյալների ներկայացման հաշվողական համակարգերը, ինչպես նաև այն ֆիզիկական երևույթները, որոնց ներդրումը կարևոր է միկրոալիքային ջերմաստիճանային քարտեզների հատկությունները ուսումնասիրելու համար:

Ներկայացված են գալակտիկաների հալոների վերաբերյալ արտածված արդյունքները, դրանց համեմատությունը տեսական մոդելների հետ, թե մուլթ նյութի տարածական բաշխման վերաբերյալ, թե միկրոալիքային ճառագայթման մեջ միջաստղային փոշու ներդրման առնչությամբ: Ակնհայտ է կատարված տեսական մոդելների վերաբերյալ և հաշվողական աշխատանքի զգալի ծավալը՝ այլ աշխատանքների համատեքստում, ինչը երևում է ներկայացված գրականության մեծ ցուցակից:

Պետք է նշեմ, որ ես առիթ եմ ունեցել լսելու Ամեիյանի ելույթը կատարված աշխատանքի վերաբերյալ, մասնակցելու դրա մանրամասն քննարկմանը, և այդ ամենով կարող եմ ասել, որ բարձր եմ գնահատում ատենախոսությունը, որպես անկասկած կարևոր բնագավառի հետազոտության արդյունք:

Իհարկե, մուլթ նյութի խնդրի բազմաշերտության հետ կան բազմաթիվ առնչվող հարցեր, որոնք կարող էին քննարկվել ատենախոսությունում, սակայն, այդ կարգի դիտողությունները, իհարկե, չեն վերաբերվում դրա բուն նյութին:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են միջազգային ամսագրերում: Ամփոփագիրը լրովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Գտնում եմ, որ այս ստեղծագործությունը համապատասխանում է 'տեսական ֆիզիկա' մասնագիտացմամբ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման պահանջներին և հեղինակը՝ Արմինե Ամեխյանը անկասկած արժանի է այդ գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս



Արա Սեդրակյան

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա.Սեդրակյանի ստորագրությունը հաստատում եմ

Մանչեսթերի կառավարման Քաճեթի ղեկավար՝

Լ. Միլլայթ

